

համար, զոր իւր նախահաւան Տրական Տանուլար շինած էր, եւ որ թշնամեաց յաճախ յարձակմամբն շատ վնասուած էր¹⁴⁶ :

Յամին 1762 Հայ մը ծախեց իւր երկիրներն, որ Քոզմանի շրջանակին մէջ էր, Քրիստիանի զօրապետին՝ Փիլիպպինի (Prilipeze) գերմանացի գաղթականաց համար¹⁴⁷ . սակայն այս գաղթականութիւնն չկրցաւ այս երկիրները ձեռք բերել, մանաւանդ թէ գրաւականն ալ կորսնցուց, վասն զի հաւանօրէն ծախողն երկրին բուն տէրը չէր այլ վարձակալը, եւ հետեւաբար ծախելու իրաւունք չունէր :

Երբ աւստրիական բանակը Պուքովինա գրաւեց, Փոն Սբէնի զօրապետն 1775 ին միայն 58 Հայ¹⁴⁸, 2 հայ քահանայ եւ 1 սարկաւազ գտաւ¹⁴⁹ . իսկ կարողոս Ֆրայհէր Փոն Էնցէնպէրկի, որ 1778 Ապրիլէն մինչեւ 1786 Հոկտ. նոյն երկիրը կառավարեց¹⁵⁰, 200 հայ ու յոյն կալուածատէրներ գտաւ, մեծ եւ հարուստ մասն Սուլա վա քաղաքը կը բնակէին, ուր 1778—1779 գրեթէ 60 փայտաշէն տուն շինել տուին :

Էնցէնպէրկի զօրապետն յետոյ Սուլավայի մէջ 118 հայ ընտանիք գտաւ¹⁵¹ : Էնցէնպէրկի վարչութեան ատեն Հայք ստոյգ 200 հոգիէ աւելի էին, վասն զի իւր գտած 118 ընտանեաց իւրաքանչիւրն եթէ միայն 3 հոգիէ բաղկանար, որ ստուգիւ շատ նուազ հաշուուած է, Սուլավացի Հայերն 350 եւ թերեւս աւելի կ'ըլլան : Թէ Պուքովինայի գրաւման ժամանակ նոյն տեղ աւելի էին թուով, քան որչափ պաշտօնապէս կը